# ԱԶԳԱՑԻՆ

## ՆՈՐԸՆՏԻՐ ՀՈԳԵՒՈՐՀՈՒԹԻՒՆ Հ. ԴՊՐ. ՄՈՍԿՈՎԱՅ

Պարոնայք Սարգիս Խոջայեանց, Կարապետ Ռախլեանց, Սարգիս Սուսանեան, Մակար Ալլուխանեանց, Յովհաննէս Թուշմալեանց ընտրուեցան Հոգաբարձու Մոսկովայ Հայոց Հոգևոր դպրոցին. զոր և Նորին Ս. Օծութիւնն հաճեցաւ հաստատել օրհնութեան կոնդակաւ իւրեանց պաշտօնից մէջ։

Վերոյիշեալ անձանց վկայեալ բարեսէր զգացմունքները և եռանդուն սրտերը գրաւական են իւրեանց այս փափուկ միանգամայն վսեմ պաշտօնին մէջ համաձայն կամաց և եռանդեան Ս. Հայրապետիս յօդուտ Ազգի մերոյ և Ս. Եկեղեցւոյ առ իարգիւնաւոր հանդիսանալ՝ որպէս ամէն ճշմարիտ Ազգասիրաց մշտախանդ անձուկներն են և կը պահանջէ ներկայ ժամանակս։

---

## ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՆԱՀԱՑՐ Ս. ԽԱՉ ՎԱՆՈՒՑ Ն.-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

Երժանապատիւ Գէորգ Վարդապետ Երամեանց Նոր-Նախիջևանայ Սուրբ Խաչ Վանուց Վանահայր կարգեցաւ։

Նորին Երժանապատութեան ուսումնասէր եռանդը կը հաւատացնէ զմեզ, որ նոյն վանուց Հոգ. ուսումնարանի բարենպաստակ Հոգաբարձութեան անխոնջ ջանից հետ աջակցեալ՝ Արբաղնադոյն Կաթողիկոսի կամաց և փափագանաց համաձայն արդիւնք կընծայէ իւր կրկին պաշտօնին մէջ, և համակրութեան ու յարգանաց առաւել արժանի կը հանդիսանայ իրաւամբք։

---

## ՆՈՒԷՐ

Պարոնայք Ենոան և Մելքոն Թասրեանց համաձայն իւրեանց բարեպաշտական ուխտի՝ երկուց երիվարաց փոխարէն դին ութսուն ռուբլի ընծայեցին յօդուտ Ս. Աթոռոյս։

Կը գովեմք նոյն Պարոնայից բարեպաշտութիւնը, և հրապարակաւ կը յայտնեմք մեր շնորհակալութիւնը։

---

## ՄԱՐԳԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ռազուայ Մարգասիրական Ընկերութիւնը՝ ազգօգուտ եռանդեամբք՝ նոյն քաղաքի Ս. Լուսաւորիչ անուամբ նորաշէն Եկեղեցւոյն արտաքին սրահի դատարկ շրջակայքի վերայ բարեգործական շինութիւնք կատուցանելոյ համար՝ ի ձեռն Հոգևոր իշխանութեան մատուցած խնդրոյն և կանոնաց հաստատութիւն և լուծում ընկալաւ ի Վեհափառ Հայրապետէ մերմէ։

Հանդերձ խորին շնորհակալութեամբք բարեմաղթելով յերկնից կատարեալ յաջողութիւն Մարգասիրական ընկերութեան օգտաւէտ և անձկալի նպատակին համար, արժան կը համարիմք ստորև նոյն Ընկերութեան այս առթիւ առ Գէր. Ընդբէաս Ս. Եպիսկոպոս Հոգևոր Տեսուչ Շամախւոյ տուած խնդրոյն և առաջարկութեան կարևոր պարբերութիւնքը հաղորդել յօրինակ բարի և ի խրախոյս համայն սիրելի ազգայնոցս։

Հերոյին Բարձր Սրբազնութեան արդէն յայտնի է, որ մեր Մարդասիրական Ընկերութիւնն հաստատուած լինելով Հրամանաւ Օգոստափառ Թուսաց Կայսերն ի 21ն Մայիսի 1864 ամի մտանելով իւր գործունէութեան ասպարէզն՝ համաձայն կանոնագրութեան իւրոյ բացել է Բագու քաղաքումն օրիորդաց ուսումնարան Հայոց, Թուսաց, և Թուրքաց տպարան, դրատուն և ընթերցարան, բաց ի որոց կարճ ժամանակի միջոցում մտադիր է բանալոյ դեղանոց և հիւանդանոց աղքատաց համար։ Ընկերութիւնը նմանապէս ունի դիտաւորութիւն մասնակից լինել այլ և կառավարութեան ծախուց և բարեկարգութեան տեղւոյս Ծրխական Դպրոցին։ Այս յիշեալ ուսումնարանաց և միւսոց տեղաւորութիւնը լինում մասնաւոր անձանց պատկան շինուածոց մէջ ի հարկէ հարկաւորեալ ծախուք՝ և որ աւելի անյարմարն է՝ զանազան միմեանցից հեռաւոր տներում. այս ծախուց և անյարմարութեան առաջն առնելոյ նպատակաւ, Ընկերութիւնն խորհրդակցութեամբ Անդամց որոնումեր մի այլ պատշաճաւոր և կետրոնական տեղի, ուր կարելի լինէր Ընկերութեան ծախուք կառուցանել քարաշէն շինուած մի, որոց մէջ յարմարաւոր ձևով տեղաւորվէին վերոյիշեալ ուսումնարաններն ևն։ Բայց այժմ շնորհիւ Ձեր ներկայութեան և առաջարկութեան Ընկերութիւնը աւելի բարեպատշաճ և օգուտ է համարում՝ այս խորհուրդը կատարելու որպէս յօգուտ ազգին՝ նոյն և ի պայծառութիւն Բագուայ Նորաշէն յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի կառուցեալ Եկեղեցւոյ Նորապատկան շրջակայքի բաց և դատարկ բակումն շինութիւններ անել, թէ ինչ ձևով և քանի սենեակներ (որոց թուումն և Առաջնորդարան) պիտի լինի Ընկերութեան շինուածքն, կարող է Ձեր Բարձր Սրբազնութիւնը նկատել սորա մէջ առաջարկուած նախագիծ ձեւագրից, ուստի համաձայն օրագրութեան ժողովոյն խորհրդոյ Ընկերութեան ի 6ն Նոյեմբերի տարւոյս (1870), Անդամք Խորհրդարանի այս ներկայ յայտարարութեամբս խնդրամատոյց լինելով Ձեր Բարձր Սրբազնութեանը, խնդրումեն Ձեր միջնորդութիւնը անխնայ ի գործ դնելու ուր և ինչպէս հարկն է, որ Բարձրագոյն Հոգևոր Իշխանութեան կողմանէ թոյլտվութիւն լինի Մարդասիրական Ընկերութեան յիշեալ նորաշէն Եկեղեցւոյ շրջակայքում մտադրեալ շինուածքն շինելու, որոյ մասին և Ընկերութիւնը իւր կողմանէ առաջարկում յետագայ պայմաններս. Առաջին, Ընկերութիւնն ընդունում անդարձ իւր վերայ բոլոր հարկաւորեալ ծախքը թէ եկեղեցւոյ շրջակայքի պարսպին պատշաճաւոր ձևով դռների և թէ այլ վերոյիշեալ ուսումնարանների, դրատան, տպարանի, Առաջնորդարանի և կրպակների շինուածների համար համեմատ տեղական կառավարութենէ հաստատուած ձևակերպութեան։ Երկրորդ, հարկաւորեալ ծախսն յիշեալ շինութիւնների հասնումն մինչև տասն հազար բուրլի արծաթ դրամ, զոր Ընկերութիւնը պարտաւորվում գործ դնելու իւր սեպհականութիւնից՝ որպէս յիշած է ի վերն, չունենալով իրաւունք պահանջել Հոգևոր կառավարութիւնից ոչ այն դրամագլուխն, և ոչ նորա տոկոսիքը։ Երրորդ, այս շինութիւնքը յետ նոցա վերջաւորութեան պիտի համարուին եկեղեցական կալուածք. միայն եթէ ըստ դիպման ժամանակին հանգամանքները ներեն, այս շինութիւնքներից (բաց ի նրանցից՝ որոց մէջ որ պիտի տեղաւորվին դպրոցները,) Ընկերութիւնը ունենայ իրաւունք տալ վարձու և նոցանից զոյացած օգուտը որպէս սեպհական արդիւնք մտանէ նորա դանձարանը առանց մասնակցութեան Հոգևոր Իշխանութեան։ Չորրորդ, եթէ Տէր մի՛ արասցէ՝ երբ և իցէ Ընկերութիւնն ձախորդ հանգամանքներով հարկադրուած լինի դադարացնելոյ իւր գործունէութիւնը, նոյն ժամանակ յիշեալ իւր շինուածներու արդիւնքը պիտի մնան անդարձ սեպհականութիւն յիշեալ Բագուայ Նորաշէն Եկեղեցւոյն։ Հինգերրորդ, բաց ի յիշեալ պայմաններից Ընկերութիւնը պարտաւորվում պահպանելու, բարեկարգելու և ծխական Դպրոցին օգնելու, երբ Հոգևոր Իշխանութեան եկեղեցական եկամուտներից սահմանեալ գումարը չբաւականանայ. և վեցերրորդ, որովհետև Ընկերութեան գործունէութեան ըստ մեծի մասին շրջանը այս պայմաններով պիտի կեդրոնանայ Եկեղեցւոյ բակում՝, վասնորոյ Ընկերութիւնը իւր կողմանէ բարեպատշաճ և օգտաւէտ է համարում՝ խնդրել Հոգևոր Իշխանու-

թիւնից ընդունելոյ համար իւր տեսչութեան տակ տեղւոյս նորաբաց օրիորդաց Հոգևոր ուսումնարանը, ի հարկէ բոլոր ծախուց հաշիւը Ընկերութեան խորհրդի Անդամոց պատասխանատուութեանը թողելով, հետևելով այն բոլոր կանոնադրութեան և հրամանատուութեան, որ Հոգևոր իշխանութիւնը կբարեհաճի տալու Ընկերութեան Անդամներին։ Վերջապէս անպատեհ չէ համարում յայտնել Ձերդ Սրբազնութեան և այն մասին, որ երբ Հոգևոր Ծայրագոյն Իշխանութիւնը բարեհաճեաց հաստատել այս մեր խնդիրը, Ընկերութեան խորհուրդը իւր գործոց մէջ պէտք է ունենայ մի այնպիսի անհերքելի պաշտօնական ձևով հաստատուած ապահովաթուղթ, որով կարողանայ գործ դնել իւր իրաւունքները որպիսի և իցէ արգելառիթ դիպուածոյ մէջ, որ կարելի է պատահել այդպիսի հանգամանքներում։

---

## ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ
## Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՑՍ

(Շարունակութիւն։)

### Ի ՄՈՍԿՎԱ

| | |
|---|---|
| Մկրտիչ Ասկարխանեանց . . . . . | 100 |
| Յովհաննէս Յովնանեանց . . . . . | 100 |
| Նիկողայոս Դիլանեան . . . . . . . | 10 |
| Բաշխի Կիրակոսեան Խալաթեանց . . . | 100 |
| Սիմէօն Յարութիւնեան Սահարբէկեան . | 100 |
| Բաղդասար Բօղդանեան . . . . . . | 50 |
| Սարգիս Ջաումեանց . . . . . . . | 50 |
| Ոմն Հայ . . . . . . . . . . . | 25 |
| Խաչատուր Լազարեանց . . . . . . | 50 |
| Մելքոն Գասպարեան Փանեանց . . . | 20 |
| Մեհրուժան Բաքիշեան Խալաթեանց . . | 25 |
| Յովակիմ Յարութիւնեան Բարանասեանց | 15 |
| Աղամջանեանց Տփխիսեցի. . . . . . | 15 |
| Բարսեղ Գէորգեան Քեթխուդեանց . . . | 25 |
| Գէորգ Լիանոզեանց . . . . . . , | 25 |
| Ստեփանոս Նազարեանց . . . . . . | 10 |
| Գէորգ Քանանեանց . . . . . . . . | 10 |
| Ոմն Հայ . . , . . . . . . . . . | 10 |
| Յարութիւն Աւագ Քահանայ Կեօքչէեանց | 5 |

---

### ՅԱՍՏՐԱԽԱՆ

| | |
|---|---|
| Մկրտում Դանիէլեան Սէրգէյեանց . . | 150 |
| Դանիէլ Մկրտումեան Սարգսեանց . . . | 25 |
| Յարութիւն Մկրտումեան Սարգսեանց . | 15 |
| Գրիգոր Մկրտումեան Սէրգէյեանց . . . | 10 |
| Յարութիւն Գէորգեան Մատաթեանց . . | 100 |
| Հայ ոմն . . . . . . . . . . . . | 10 |
| Սարգիս Բուրջալեանց . . . . . . . | 25 |
| Գաբրիէլ Ուլուխանեանց . . . . . . | 50 |
| Հայ ոմն . . . . . . . . . . . . | 2 |
| Սարգիս Գաբրիէլեան Աղամջանեանց . . | 25 |
| Կիրակոս Գաբրիէլեան Աղամջանեանց . | 25 |
| Եղբարք Քուրդովեանք . . . . . . . | 25 |
| Եղբարք Ջանումեանց . . . . . . . | 50 |
| Մկրտիչ Գէորգեան Տէր Սիմէօնեանց . . | 10 |
| Նիկողայոս Սիմէօնեան . . . . . . | 25 |
| Դանիէլ Յարութիւնեան Ֆրանգուլեանց և որդի Նորին Յարութիւն . . . . . . | 15 |
| Յակոբ Հայրապետեան Կրանիկլիկեան . . | 5 |
| Ալէքսանդր Յարութիւնեան Բուդախեանց | 5 |
| Թադէոս Աւագեան Սաֆարեանց . . . | 5 |
| Կատարինէ Յակովբեան Կաղաչկովեանց . | 5 |
| Սարգիս Մակարեան Մակարեանց . . . | 25 |
| Անյայտ ոմն . . . . . . . . . . | 5 |
| Օհան Գալստեան Մխնիքեան . . . . . | 5 |
| Ստեփաննոս Առաքելեան Կիրէօվեանց . . | 5 |
| Մկրտիչ Ուկլովեանց . . . . . . . . | 10 |
| Եղբարք Ֆրանգուլովեանց . . . . . . | 15 |
| Մելքում Տէր Սարգսեանց . . . . . . | 5 |
| Սարգիս Թամազեանց . . . . . . . . | 5 |
| Յովհաննէս Յակովբեան Ֆրանգուլեանց . | 5 |
| Յովհաննէս Մկրտչեան Կալէեանց . . . | 3 |
| Պետրոս Օհանեան Դուչկինեանց . . . | 2 |
| Մկրտիչ Օհաննէսեան Ախվերտովեանց. . | 5 |
| Մկրտիչ Աբրահամեան Սուրաբէկեանց . | 5 |
| Մախլնեյ Դորեան . . . . . . . . | 5 |
| Վարդան Պաստակեանց . . . . . . . | 15 |